Ուստի պէտք է նշեմ, որ համամասնական ցանկը ներկայանալի եւ անբողջական է: Յանկին 101 անձերէն իւրաքանչիւրը բարձրագոյն կրթութիւն ունի, կան տասնեակ մը գիտորդներ եւ գիտութիւններ թեկնածուներ, 25 առ հարիւր կ'ինքն իր, 28 առ հարիւր՝ անկուսակցականներ: Ընդդիմութիւնը ցանկին մէջ միայն մէկ հոգի գտաւ, որ առնչութիւն ունեցած էր ուժանակութիւնը շարժանուններուն հետ: այդ անձը դիմում գրեց եւ պաշտօնը ստացաւ:

«ՀԱՅՈՅ ԱՇԽԱՐՀ»

(Արեւմտահայերէնի վերածուած)

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊՈԼԻՍ

ԼՈՅՍ ՏԵՍԱԿ «ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ ԾՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԾՆՆԳԵԱՆ ԻՆՆՍՈՒՆԱՄԵԱԿԻ» ՀԱՏՈՐԸ

Վերջերս Կ. Պոլսոյ հայոց երջանկայիշատակ պատրիարք Ծնորհք արք. Գալուստեանի ծննդեան 90ամեակին առիթով Պոլսոյ մէջ պատրաստուած եւ հրատարակուած է գեղատիպ յուշամատեան մը:



Գիրքը կը բաղկանայ երկու բաժիններէ: Առաջին բաժինին մէջ ներկայացուած են հոգեւորականներու եւ աշխարհականներու վկայութիւնները Ծնորհք պատրիարքին մասին: Երկրորդ բաժինին մէջ տեղ տրուած է ընդհանրապէս Ծնորհք պատրիարքի դիմանկարներու սեւ - ճերմակ լուսանկարներուն: Գիրքը հրատարակուած է հայերէնով: Գրութիւններու խմբագրական աշխատանքը կատարած է Մաքրուհի Պ. Յակոբեան:

«ՀԱՅ ԿԻՆ» ԽՄԲԱԿԸ ՆՇԵՅ ԿԻՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

«Հայ Կին» խմբակը 8 Մարտին՝ կիրակու միջազգային օրուան առիթով կազմակերպեց քանի մը ձեռնարկներ, որոնց ընթացքին յիշատակուեցան անուանի կին գրողներ եւ կատարուեցան շարժանկարի ցուցադրութիւններ:

Այս շրջագրութիւն մէջ տեղի ունեցած ձեռնարկներու շարքին յիշեցք Երիւրի գերեզմանատան մէջ Ջապէլ Ասատուրի (Միպիլ) դամբարանին տրուած այցելութիւնը, Ֆերիդիւղի սրահին մէջ Պոլսոյ հայ համայնքին մէջ կ'ինքն իրազեցած դերին մասին աշխատաթղթով, Կեդրոնական Սանուց Միութեան մէջ «Հրեշտակներու երգանքը» անունով ժապաւէնի ցուցադրութիւն, Օրթագիւղի Թարգմանչաց Սանուց Միութեան մէջ Սրբուհի Տիւսարի յիշատակութեան հաւաքով, եւ այլն:

ՄԻԱՅԵԱԼ ՆԱԸՆԱԳՆԵՐ

ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆ ՄԸ ԻՐ ԳՐԱԳԱՐԱՆԸ ԿԸ ՆՈՒԻՐԸ ՅԻՐԵՂՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

Քալիֆորնիոյ նահանգի Ֆրեզնո շրջանի պետական համալսարանի հայկական ուսումնասիրութիւններու դասախօս Արա Աւագեան հայ դրականութեան եւ պատմութեան մասին մօտաւորապէս 3000 դիրքերէ եւ հրատարակութիւններէ բաղկացած հաւաքածոյ մը նուիրեց համալսարանի «Հէնրի Մէտտըն» գրադարանին եւ հայկական ուսումնասիրութիւններու ամպիտին:

Գրադարանը ներկայիս սկսած է դասաւորել մօտաւորապէս քառասուն հազար տոլար արժող այս նուէրը, որ կը բաղկանայ 19դ դարէն մնացած քանի մը արժեքատու թանկարժէք հրատարակութիւններէ եւ:

Արա Աւագեան, որ ներկայիս 90 տարեկան է եւ ալլեւս հանգստեան կոչուած է իր պաշտօնէն, Մասաչուսեթսի համալսարանի արհեստագիտական բաժնի:

Ժամանակը աւարտելէ ետք սկսած է հաւաքել հայոց պատմութեան եւ հայկական մշակութիւն վերապրող գիրքեր: Ինք այս բարձրագոյն հաստատութիւնը աւարտած էր ուսուցչութեան ու բնագիտութեան ճիւղէն, ուստի իր հաւաքածոն զարգացաւ նաեւ գիտական գիրքերով:

ԿԼԵՆՏԵՅԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՎԱԵՐԱՅՈՒՅ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ ԵՐԿՈՒ ԶԵՆՆԱՐԿՆԵՐ

Կլենտէյլի քաղաքապետական խորհուրդը 8 Ապրիլի իր նիստին ընթացքին վաւերացուց քաղաքապետութեան կողմէ կազմակերպուած եւ Հայկական Յեղասպանութեան նուիրուած «Յիշատակի շարժում - 2003» անուան տակ Ապրիլին տեղի ունենալիք երկու ձեռնարկները:

Առաջին ձեռնարկը, որ տեղի պիտի ունենայ 21 Ապրիլին, «Մարդուն անմարդկայնութիւնը մարդուն նկատմամբ» խորագրով հրատարակային ասուլիս մըն է: Իսկ երկրորդը Յեղասպանութեան 88ամեակի ոգեկոչումն է, որ տեղի պիտի ունենայ 24 Ապրիլին: Կլենտէյլի քաղաքապետական խորհուրդի անդամ եւ ուղեկցման ձեռնարկի յանձնախումբի ատենապետ Տէյվ Ռեյվըր այս առիթով յայտնեց, թէ նշեալ ձեռնարկներուն նպատակն է հանրութիւնը տեղեկ պահել գործապարտած ցեղասպանութեան, որպէսզի նոր ցեղասպանութիւններու առաջըր առնուի:

Ասուլիսին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Տէյ Ռեյվըր, Պրոքսի Ուէյնրոպ, Ռոնըր Պոլլըման եւ Լեւոն Մարաշեան:

Օրուան գլխաւոր բանախօսը պիտի ըլլայ Վահագն Տատրեան:

ԲԱԼԻՏՈՐՆԻՈՅ ՆԱԸՆԱԳԱՅԻՆ ԾԵՐԱԿՈՅՑԸ

ԱՊՐԻԼ 24Ը ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՕՐ

7 Ապրիլին Քալիֆորնիոյ նահանգային Ծերակոյտը միաձայնութեամբ վաւերացուց բանաձեւ մը, որ կ'առաջարկէ Ապրիլ 24ը նահանգին մէջ հռչակել իբրեւ Հայկական Յեղասպանութեան օր:

Տարիներէ ի վեր, Քալիֆորնիոյ օրէնսդիր իշխանութիւնները որդեգրած էին նմանօրինակ բանաձեւեր՝ պատրաստուած նահանգային ծերակուսական ջրա փուլիկեանի կողմէ: Այս առիթով Փուլիկեան ըսաւ, թէ շատ քիչ են այն հայերը, որոնք ուղեկցի կապ չունին Յեղասպանութեան հետ: Ան դիտել տուաւ, որ Յեղասպանութեան ուրացումին պատճառով վիշտ ու ցարկ կը կրկնապատկուին: Բանաձեւը այժմ փոխանցուած է նահանգային խորհրդարանի էնեմպլի, առ ի քուէարկութիւն:

ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՁՈՒՆԵՐՈՒ ՅԻՇԱՍԱԿԻՆ

Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը Միացեալ Նահանգներու բնակչութեան կողմէ Ցեղասպանութեան օրը հռչակելու վարկեան լուծութեամբ յարգել Հայկական Յեղասպանութեան գոհերու յիշատակը:

Յանձնախումբը հրատարակած է հաղորդագրութիւն մը, որուն մէջ դիտել տուած է, թէ Օսմանեան Թուրքիոյ մէջ 1915ին կատարած Հայկական Յեղասպանութեան գոհերու յիշատակին յարգումը նշանակալից է Յեղասպանութեան ղէմ պայքարի ընդհանուր աշխատանքին մէջ եւ կը նպաստէ ապագային նման ոճիրներու կանխարգիլման: «Լուծութեան երկու վարկեանները նաեւ յարգանքի տուրք պիտի ըլլան Միացեալ Նահանգներու կողմէ Ցեղասպանութեան ուխտի վաւերացման 15ամեակին եւ պիտի նպաստեն նաեւ Ծերակոյտի ցեղասպանութեան հարցին առընչուող թիւ 307 բանաձեւի կիրարկման», նշուած է Հայ Դատի Յանձնախումբին հաղորդագրութեան մէջ:

ՈՒՄԱՆԻԱ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԳԵԱՆ 100ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ ԶԵՆՆԱՐԿ

Վերջերս Ռուսաստանի մայրաքաղաք Պուրեթի «Մի-հայի Երոս» սրահին մէջ կազմակերպուած համերգով մը մեկնակէտը տրուեցաւ Արամ Խաչատուրեանի ծննդեան 100ամեակին նուիրուած ձեռնարկներուն: Ներկայ էին Ռուսաստանի նախագահ Իոն Իլիչեւը, բարձրաստիճան պաշտօնատարներ, ուսմանահայ գաղութի ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ՝ օտար ղեկանազէտներ ու ղեկավարներ:

Համերգը կազմակերպուեցաւ Պուրեթի մէջ Հայաստանի ղեկավարներու եւ Ռուսաստանի մայրաքաղաքի ղեկավարներու ընկերակցութեան նախաձեռնութեամբ:

Յայտագիրը ընթացքին հանդէս եկաւ Ռուսաստանի Ազգային ձայնափիւռի սիմֆոնիք նուագախումբը՝ Թէոտոր Քուչայի (Միացեալ Նահանգներ) խմբավարութեամբ եւ Միհայիլ Մարթինի (Գերմանիա) ջութակի մենակատարութեամբ:

Ներկայներուն ներկայացուցեցան նմուշներ Արամ Խաչատուրեանի ջութակի քոնչերթոյնն եւ «Գայիանէ» եւ «Սպարտակ» պոլկաներէն: Համերգի աւարտին նախագահ Իլիչեւը գնահատեց Հայ մեծանուն յորինողին ստեղծագործական ժառանգութիւնը՝ յիշեցնելով, որ Արամ Խաչատուրեան ստեղծագործական սերունդը կ'աւելնէ ունեցած է Ռուսաստանի արուեստի աշխարհի ներկայացուցիչներուն հետ:

www.aztagdaily.com

ԱՅԻՆ!
ԱՄԵՏԻ ԸՆՔԸ Բ. ՅԱՐԿ
ՆՈՒ. 01/242556

ՁԵՐ ԻՆՔՆԱՇՄԱՐԹԻՆ ԱՊԱՆՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝
ՎԱՏԱՎԵՅԷՔ Ա Յ Ի Լ - Ի

ԻՐԱՔԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

Իրաք կը շարունակէ իր վրայ պահել միջազգային լուսարձակները, ուր Պաղատոսի անկումէն ետք կը շարունակուին աւարը, քանդումն ու կողոպուտը, եւ մինչեւ իսկ թանգարաններէն պատմական անգնահատելի արժէք ներկայացնող եւ քաղաքակրթութեան խորհրդանշիչ նկատուող հնութիւններ անհետացած են:

Նախորդ յօդուածով ներկայացուցած էինք Միջագետքի հին պատմութիւնը՝ հասնելով մինչեւ Ասորեստանի անկումը: այժմ կը ներկայացնենք հետագայ ժամանակաշրջանը՝ հասնելով Իրաքի արաբացումը եւ իսլամացումը:

ՆՈՐ ԲԱՐԵԼՈՆԵԱՆ ԿԱՅՐՈՒԹԻՒՆԸ

Պարսից ծոցի ափերուն ընկող քաղաքացիք, որոնք բարեկամ սեմական անասնապահ ցեղախումբէրէն են ամբողջութեամբ չէին նուաճուած Ասորեստանի կողմէ, մտաւորապէս Ն. Ք. 630ին թագաւորութիւն հիմնեցին: Ասորեստանի կործանումէն ետք (612) անոնք նուաճեցին Միջագետք եւ հիմնեցին նոր Բաբելոնեան կայսրութիւնը:

Նոր Բաբելոնեան կայսրութեան ամենէն նշանաւոր գահակալը դարձաւ Նաբուգոդոնոսոր Բ. (605էն 562), որ բազմաթիւ արշաւանքներու ընթացքին նուաճեց Ասորիքը, Պաղեստինը, Յուդայի թագաւորութիւնը (որուն ընկալուեցան մեծ մասը Բաբելոն գերեզմարեց),




Բաբելական խճանկար
Փրենկէն, հիւսիսային Միջագետք եւ ներխուժեց Եգիպտոս: Բաբելոն դարձաւ հզոր պետութիւն, զարգացան մշակոյթն ու տնտեսութիւնը եւ լայն թափ ստացան շինարարական աշխատանքները: Բաբելոնի պարիսպները կրկնապատկուեցան եւ հզոր ամրութիւններով շրջափակուեցան:

ԱՔԵՄԵՆԵԱՆ ԿԱՅՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԻՆ ՄԷՋ

Պարսիկ Աքեմենեան կայսրութեան հիմնադիր Կիւրոս Բ. Ն. Ք. 539ին նուաճեց Բաբելոնը, որմէ ետք Միջագետք մաս կազմեց Աքեմենեան ընդարձակածաւր կայսրութեան: Ան գրաւեց նաեւ Պաղեստինը, որմէ ետք Բաբելոն բռնազաղթուած հրեաները վերադարձան: Բաբելոն Աքեմենեան կայսրութեան ամենէն բարգաւաճ նահանգը դարձաւ, մինչ հիւսիսային Միջագետքը՝ Ասորեստան կը մնար աղքատ ու անտեսուած երկրամաս մը: Պարսիկներ իրենց ձեռքբերուն մէջ կեդրոնացուցին կառավարական զլխաւոր ըրոր պաշտօնները: Միջագետք կը նկատուէր Աքեմենեան տան խաբիսը եւ արքայական տան անդամներ Բաբելոնի պալատներուն մէջ կը բնակէին, իսկ արամեբէնքը պաշտօնական-գրագրական լեզու էր:

ՍԵԼԵՒԿԵԱՆ ԿԱՅՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԻՆ ՄԷՋ

Աքեմենեան կայսրութիւնը կործանեցաւ Ն. Ք. 331ին, Աղեքսանդր Մակեդոնացիի կողմէ, որուն մահէն ետք, երբ անոր հիմնած կայսրութիւնը 321ին երկուքի բաժնուեցաւ, Միջագետք մաս կազմեց 312ին կազմաւորուած Սելեւկեան կայսրութեան:



Արաբերէն ին արձանագրութիւններ Եւֆրատի մէջ

ՄԻՋԱԳԵՏՔ՝ ԲԱԲԵԼՈՆԵԱՆ ԿԱՅՐՈՒԹԵԱՆ ԵՆ ՄԻՆՉԵՒ ՕՄԱՅԵԱՏՆԵՐՈՒ ԽԱԼԻՖԱՅՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԸ

ափերէն մինչեւ ներկայ Աֆղանիստան: Հիմնուեցան նոր քաղաքներ, որոնցմէ Սելեւկիա՝ Տիգրիսի ափին (ներկայ Պաղատոսէն քանի մը քիլոմետր հարաւ) եւ Անտիոք՝ Որոնդէսի ափին: Սելեւկիա դարձաւ արեւելեան երկրամասերուն մայրաքաղաքը, ուր մեծ թիւով յոյն եւ մակեդոնացի վերաբնակիչներ հաստատուեցան եւ քաղաքական ու գինուորական ղեկավար դիրքերու տիրացան: Յունարէնը դարձաւ պաշտօնական լեզու կայսրութեան տարածքին եւ յունական աստուածութիւններու նուիրումը տաճարներ կառուցուեցան:

Սելեւկիա հետագային ինքնավար մայրաքաղաք դոյալիճակ ստացաւ եւ փոխարինեց Բաբելոնը՝ իբրեւ քաղաքական, մշակոյթի ու տնտեսական կեդրոն:

ՊԱՐԹԵԱՆԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԸ

Սելեւկեաններու տկարացման պայմաններուն տակ վաչկատուն սակերու Պարս ցեղախումբը Ն. Ք. մտաւորապէս 250ական տարիներուն ներխուժեց Կասպից ծովու հարաւ-արեւելեան շրջանները եւ խառնուեցաւ տեղացի պարթեւներուն մէջ: Պարս ցեղի առաջնորդ Արշակ հիմնեց Արշակունիներու հարստութիւնը:

Պարթեւները գործնալով՝ Ն. Ք. Բ. դարուն մտան Միջագետք. անոնք չզրաւեցին Սելեւկիան, բայց փոքր գորգունդ մը տեղակայեցին մտակալ Տիգրոնի մէջ, որ յետոյ իրենց մայրաքաղաքը դարձաւ (Սելեւկիա կը գտնուէր Տիգրիսի արեւմտեան ափին, իսկ կողքին, աջ ափին՝ Տիգրոն): 161էն 136 անոնք նուաճեցին Միջագետքի մեծ մասը:

Տիգրոն Մեծի հարուածներուն տակ 84-83ին նուաճուեցաւ Սելեւկեան կայսրութիւնը, իսկ 64ին հռոմայեցի Պոմպէոս գորավար ջնջեց Սելեւկեաններու հարստութիւնը: Պարթեւներ ընդարձակեցին իրենց սահմանները եւ ամբողջ Միջագետքն ու յարակից երկրամասերը իրենց տիրապետութեան տակ առին:



Նիւոնի պալատին Պախապան ուղի

մտան: Տիգրոնէն հիւսիս գտնուող Նեհարտէա աւանը հրէական կեդրոնական բնակավայրի վերածուեցաւ:

Պարթեւական տիրապետութեան ժամանակաշրջանին մայրաքաղաք Տիգրոն բարգաւաճեցաւ եւ փոխարինեց Միջագետքի հին քաղաքները: Տեղական հին կրօնական հաւատալիքները պատմութեան անցան եւ հելլենիստական ու արեւելեան եւ իրանեան կրօններու խառնուրդ հաւատալիքներ ներմուծուեցան: Չորացաւ մանաւանդ զրադաշտականութիւնը: Պարթեւերէնը, որ իրանեան լեզուն մըն էր արամեբէնքի այբուբենով, դարձաւ պաշտօնական լեզու:

Քրիստոնէութեան ծնունդէն ետք թովմաս Առաքեալ, Մար Ատայ եւ Մար Մարի քրիստոնէութիւնը տարածեցին Միջագետքի մէջ: Մար Մարի 37ին հիմնեց Տիգրոնի եպիսկոպոսութիւնը, որ յետոյ, 231ին կաթողիկոսութիւն դարձաւ: Նեստորի վարդապետութիւնը ընդունելով՝ անիկա ծանօթ դարձաւ իբրեւ նեստորական եկեղեցի, բայց յետոյ վերակոչուեցաւ իբրեւ Ասորեստանի եկեղեցի:

ՍԱՍԱՆԵԱՆ ՇՐՁԱՆ

Պարսիկ Սասանեաններ 224ին ապստամբեցան պարթեւ Արշակունիներուն դէմ, տապալեցին զանոնք, եւ 226ին հիմնուեցաւ պարսիկ Սասանեան կայսրութիւնը: մայրաքաղաքը մնաց Տիգրոն եւ Միջագետք վերածուեցաւ Սասանեան երկրամասի: Պարսիկ պետականներ պետական բարձր դիրքերու տիրացան եւ զրադաշտական կրօնական նոր համայնքներ կազմաւորուեցան Միջագետքի մէջ: Անոնց կողքին մեծ թիւ կը կազմէին նաեւ քրիստոնէաները եւ հրեաները: Այնուհետեւ ամսիքականութիւնը եւս լայն տարածում գտաւ Միջագետքի մէջ: Միջագետք Հռոմէական եւ Սասանեան կայսրութիւններուն միջեւ կռուախնձորի վե-

րած-ւեցաւ: 344ին սկսան քրիստոնեաներուն դէմ շարժերը, որոնք շարունակուեցան մինչեւ Ե. դար: Հակառակ այս իրողութեան, սակայն, աշուրի քրիստոնեաները կը մնային ազդեցիկ տարր: Նստակեաց եւ թափառաշրջիկ արարներ աստիճանաբար սկսան տարածուիլ Միջագետքի տարբեր շրջաններուն մէջ եւ արաբերէնը բաւական տարածում գտաւ:

ԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՇԱՒԱՆՔՆԵՐԸ ԵՏՔ ՕՄԱՅԵԱՏՆԵՐՈՒ ԽԱԼԻՖԱՅՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԻՆ ՄԷՋ

Իսլամութեան ծնունդէն ետք արարներ ձեռնարկեցին նուաճումներու՝ տարածելու համար նոր կրօնը: Ապու Օպէյտ թագաֆիի հրամանատարութեան տակ հինգ հազար կռուողներ 634ին յարձակեցան Սասանեան կայսրութեան վրայ եւ ձեռնարկեցին Միջագետքի նուաճումը: 637ին իսլամական մեծ բանակ մը Սաստ իպն Ապի Ուազգասի հրամանատարութեան տակ Գատիսայի ճակատամարտին ջախջախեց պարսկական բանակը, զրաւեց Տիգրոնը եւ կործանեց զայն, որմէ ետք իսլամները գրաւեցին զբեթէ ամրոցը Միջագետքը: Սասանեան վերջին թագաւորը՝ Յակաբերտ Գ. փախաւ Իրանի խորքերը, ուր սպաննուեցաւ 651ին:

Արաբական նուաճումներէն ետք կազմաւորուած Օմայիտներու խալիֆայութիւնը տարածուեցաւ հիւսիսային Աֆրիկէէն, այնուհետեւ՝ Սպանիայէն մինչեւ Ինտոս գետի հովիտը, Հնդկաստանի սահմանները: Սկիզբը Մետիսէն, եւ յետոյ, 656էն ետք, Դամասկոսը խալիֆայութեան մայրաքաղաքը դարձան:


Իսլամներու գրաւումէն ետք արարներ սկսան գաղթել Միջագետք. նոր վերաբնակիչները շտարածուեցան բովանդակ Միջագետքի մէջ: անոնք սկիզբը երկու նոր բնակավայրեր հիմնեցին. մէկը՝ Քուֆա (հին Բաբելոնի մօտ) եւ միւրը՝ Պարս, ուր պահակազօրք հաստատեցին: Իսլամ փոքր եւ իրարմէջ անտես համայնքներ կազմաւորուեցան պահակազօրքէն եւ անոնց ընտանիքներէն, որոնք տեղացիներէն զանձուրդ տուրքերէն զերծ կացուցուեցան: Հիւսիսի մէջ Մուսուլ իսլամական կառավարութեան եւ պահակազօրքի զլխաւոր կեդրոնը դարձաւ: Այսպէսով սկսաւ Միջագետքի իսլամացումը:

Մուսամմէտ մարգարէին գարմիկը՝ Ալի պըն Ապի թալէպ Օման խալիֆայի սպանութենէն ետք, 656ին, խալիֆայութիւնը ձեռք ձգելու առաջադրանքով Միջագետք իր խաբիսին վերածեց, բայց 661 Յունուարին, Քուֆայի մզկիթին մէջ արթնելով պահունը հռաւանակուեցաւ եւ երկու օր ետք մահացաւ ու թաղուեցաւ Քուֆայի մէջ:

Այսպէսով, խալիֆայութեան յաջորդութեան հարցով պառակտուած յառաջացաւ իսլամներուն մէջ, որուն հիմամբ կազմաւորուեցան սիւննի եւ շիի հատուածները: Արդարեւ, Մուսամմէտ մարգարէ Գուրէյջ ցեղի Հաշմական տոհմէն էր, որուն հիմամբ շիիները յաջորդութեան իրաւունքը տուին անոր գարմիկին՝ Ալիին, որ միաժամանակ ամուսնացած էր մարգարէի դստեր՝ Ֆաթիմայի հետ: Մինչդեռ շիիներուն հակադրուած հատուածը՝ սիւննիները զօրավիզ կանգնեցան Գուրէյջ ցեղի Օմայիտներուն տան ներկայացուցիչ Մուաւիայի, որ Ալիի սպանութենէն ետք ինքզինք խալիֆա նշանակեց Դամասկոսի մէջ:

Միջագետքի արարները զօրավիզ կանգնեցան Հաշմական տան, մանաւանդ որ Միջագետք խալիֆայութեան կազմին մէջ ստորագրան նահանգի վերածուած էր, թէեւ անիկա ամենէն հարուստ ու բարեբեր էր եւ ամենէն հոծ բնակչութիւն ունեցող երկրամասն էր: Այս հիմամբ ալ մինչեւ հիմա Իրաքի բնակչութեան մեծամասնութիւնը շիիներն են:

Քուֆայի ժողովուրդը հպատակութեան երկուցու տուաւ Ալիի գարմիկի գաւակին՝ Հասանի, բայց ան շուտով հաճախութեան եկաւ Մուաւիայի հետ: Անոր սերունդները, որոնք մինչեւ հիմա շարիֆ (մարտի) տիրուր կը կրեն, սիւննի դաւանանքին հետեւեցան եւ Մեքքէի էմիրները դարձան. վերջին էմիր-



Տիգրոնի Սասանեաններուն պալատը

ըր եղաւ Հիւսէյն պըն Ալի, որուն գահակնեքէն Ֆայսալ Իրաքի եւ Ապտալա Յորդանանի թագաւորները եղան Առաջին Աշխարհամարտէն ետք: Հաշմի ազգանունը կրող բազմաթիւ ընտանիքներ կան տարբեր երկիրներու մէջ:

Մուաւիա խալիֆա մահացաւ 680 Ապրիլին կամ Մայիսին, Դամասկոսի մէջ, եւ անոր յաջորդ հռահուեցաւ գահակը՝ Եագիտ: Կրկին արժարժուեցաւ յաջորդութեան հարցը: Քուֆայի բնակիչները հրաւեր ուղղեցին Ալիի երկրորդ գաւակին՝ Հիւսէյնի, որպէսզի գրաւէ խալիֆայութեան գահը, եւ խոստացան ամէն գնով օգնել իրեն: Հիւսէյն վստահելով քուֆացիներուն՝ Մեքքէէն ճամբայ ելաւ իր ընտանիքով, բայց երբ Քարպալա հասաւ Եփրատի արեւմտեան ափին, իր դէմ գտաւ Պասրայի կառավարիչ Ուպէյտուլլայի բանակը, որ կը գործէր Քուֆայի հիմնադիրին գաւակին՝ Օմար իպն Սաստի հրամանատարութեան տակ:

Ճակատամարտ տեղի ունեցաւ 10 Մուհարրամ 61ին (10 Հոկտեմբեր 680): Հիւսէյնի կողմնակիցները 150 հոգի էին, իսկ Օմարի բանակին թիւը՝ չորսէն հինգ հազար: Կատարի ընդհարումէ մը ետք Հիւսէյն եւ իր հետեւորդները ինկանստեբերու ու նիզակներու հարուածներուն տակ: Կիներուն ու երեխաներուն խնայուեցաւ, որոնք, ինչպէս նաեւ Հիւսէյնի զուլաղ զրկուեցան Եագիտ խալիֆային:

Քարպալայի ճակատամարտին յիշատակը նուիրական մնաց շիիներուն մէջ, որոնք ամէն տարի 10 Մուհարրամին աշուրայի սպասուրը կը տօնեն: Հիւսէյն կը նկատուի երրորդ իմամ Ալիէն եւ Հասանէն ետք:

Քարպալայի գոհերուն յիշատակը Միջագետքի արարներուն համար վերածուեցաւ Օմայիտներուն դէմ պայքարի խորհրդանշիչի, եւ Քարպալա ու Նաճաֆ (որուն կեդրոնական մզկիթին մէջ ամփոփուեցաւ Ալիի դամբարանը) շիի սրբատեղիներու եւ ուխտատեղիներու վերածուեցան:

Օմայիտներուն դէմ Միջագետքի արարներուն ընդդիմութիւնը շարունակուեցաւ. միաժամանակ մեծ թիւով ոչ արաբ բնիկներ աստիճանաբար եւ պարտադրաբար սկսան իսլամանալ:

Միջագետքի արարները 701ին մեծ ապստամբութիւն մը բարձրացուցին Մուսամմէտ իպն Աշաթի գլխաւորութեամբ, որ նուաճուեցաւ Մուրաբայէն ուղղակեալ յուրեհուն կողմէ: Միջագետք վերածուեցաւ նուաճուած երկրի: Քուֆայի եւ Պարսայի միջեւ նոր բնակավայրեր կառուցուեցան սուրիացի գինուորներուն համար: 705ին 715 Միջագետքի արարները միացան դէպի կեդրոնական Ասիա արաբական արշաւանքներուն:

ՔՐԻՍՏՈՆԵՐԻ ԹԱՂԱՆ ԹԱՓՈՐ

Աւագ Ուրբաթ, 18 Ապրիլ 2003ին, մեր Տիրոջ՝ Յիսուսի Քրիստոսի չարաբանաց խաչելութեան ու թաղման Յիշատակին սրբազան արարողութիւնը պիտի կատարուի Նոր Մարտի Ս. Զառասմից Մանկանց եկեղեցոյ մէջ:

Այս առթիւ յետ արարողութեան թաղման հանդիսաւոր թափօր պիտի կատարուի, մասնակցութեամբ Զահանայից դասուն, Դպրաց Դասուն եւ ժողովուրդին:

Եկեղեցական արարողութեան եւ թափօրին պիտի հանդիսապետուի ը քարոզիչ՝

ԳԵՐԸ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ
(Քարեցան Առաջնորդ Լիբանանի Եպիսկոպոս)

Ժամերգութիւն Թափօր Ժամը 4:30ին Ժամը 5:15ին

Կոչ կ'ուղղուք մեր ժողովուրդի բոլոր գաւակներուն՝ մասնակից դառնալու թաղման արարողութեան ու զօրանալու մահով Յարութիւն կերտած Քրիստոսի խաչով:

Ս. ԶԱՌԱՍՆԻՑ ՍԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ԱՅՍՕՐ՝ ԱՐՍԵՆԱԼ - ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՌԻՆԱՅԹԸՑ ԳԱԳԱԹԻ ՏԱՔ ԵԱԿԱՏՈՒՄ

Այսօր՝ Չորեքշաբթի, «Հայկերի» մէջ տեղի պիտի ունենայ բաւական չորաւոր ճակատում մը, երբ Արսենալ պիտի հիւրընկալէ Մանչեսթըր Երեսայթըրը (Անգլիոյ ֆութպոլի ախոյեանութիւն):

Հակառակ անոր որ Արսենալ յետաձգում մը ցում մը ունի կատարելիք (Մաուրիցիոս Պիստի մը), սակայն այսօրուան մրցումը, որ պիտի ըլլայ գագաթի ճակատում մը, վճռական պիտի ըլլայ տիտղոսին համար:


Նախապէս պարագլուխի դիրքը գրաւող եւ իր անմիջական մրցակիցին վրայ ութ կէտի առաւելութիւն ունեցող Արսենալ այսօր երեք կէտով ետ կը մնայ Մանչեսթըրէն: Հետեւաբար, լոնտոնեան կազմը եթէ այսօր ձախող յաղթանակ մը արձանագրել, առիթ պիտի տայ Մանչեսթըրի, որ աւելիով հեռանայ իրմէ:

Թէեւ Թիերի Հանրի եւ Տենիս Պերկամպի այսօր դաշտ պիտի ներկայանան, սակայն Արսեն վենկեր կը մնայ մտահոգ:

Իր կարգին, մարտիչ Ալեքս Ֆերկլարն կը գտնուի որոշ դժուարութիւններու առջեւ, որովհետեւ ունի վիրաւոր մարտիկներ: Անոնք են. Ռայլըն Կիլի, Ռէս Պրատըրն եւ Ճոն Օսի, որոնք մասնակցութիւնը այսօրուան մրցումին մինչեւ երէկ կը մնար կասկածելի:

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՃՈՐՏԸՆԻ ՎԵՐՋԻՆ ՄՐՑՈՒՄԸ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՄԷՋ



Մայքըլ Ճորտըն, որ Տոնալտ Ռամսֆելտըն կը ստանայ Միացեալ Նահանգներու դրօշակը

ԷՆ. ՊԻ. Էյ. ի երէկուան մրցումներուն, Ուաշինկթըն Ուիզարտը - Նիւ Եորք Նիքս ճակատումը եղաւ լուսարձակները իր վրան կեղծողնացնողը, որովհետեւ Ուիզարտը մարզիկ Մայքըլ Ճորտըն իր վերջին մրցումը կը կատարէր Ուաշինկթընի մէջ, թէեւ անոր կազմը փակարկու մէկ մրցում ունի կատարելիք Ֆիլադելֆիայի մէջ Սիքսթըրզի դէմ:

Ֆիլադելֆիայի դէմ փեղի ունենալիք մրցումը Ճորտընի համար յիսուս ըլլալ վերջին մրցումը, որովհետեւ ան եղանակի աւարտին յիսուս լիք է. ՊԻ. Էյ. ը: Անոր համար եղանակը արդէն իսկ աւարտած կը նկատուի, որովհետեւ անոր կազմը չկրցաւ առաջնութիւն փնէյօֆի մրցումներուն իր փոմար:

Նախքան երէկուան մրցումը, Ճորտըն, Միացեալ Նահանգներու յաշտադատութեան նախարար Տոնալտ Ռամսֆելտըն սպասաւ Միացեալ Նահանգներու դրօշակը, երկար փարսիներ ԷՆ. ՊԻ. Էյ. ի մրցումներուն իր մասնակցութիւնը բերած ըլլալուն համար:

Թէեւ անոր կազմը 93 - 79 արդիւնքով յարաբերական մը կրէր Նիքսէն, սակայն Ճորտըն յաջողեցաւ նշանակել 21 կէտ եւ 8 ռիպաւն: Մրցումին աւարտէն երկու վայրկեան առաջ Ճորտըն դուրս եկաւ դաշտէն, մինչ համակիրները ծափողջոյններով կը ճամբէին Ճորտընը:

ԿԻՐԱԿԻ ՕՐ՝ Ը.Ս.Ս. - Ը.Ս.Ը.Ս. ՊԵՅՐՈՒԹԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԴԱՇՏԻՆ ՎՐԱՅ

Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնը, շաբաթակիցին իր գումարած ժողովին, վաւերացնելէ ետք Բ. դասակարգի ախոյեանութեան 23րդ եւ նախավերջին հանգրուանի մրցումներուն արդիւնքները, իրապարակեց Ա. դասակարգի ախոյեանութեան 17րդ եւ 18րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը, որոնք տեղի կ'ունենան յառաջիկայ երեքշաբթի, 22 Ապրիլէն սկսեալ, այսինքն ճիշդ ամսուան մը ուշացումով, Իրաքի մէջ տեղի ունեցող պատերազմին պատճառով:

Ֆետերասիոնը այս ժողովին կախակալուող մարտիկներու թիւը պիտի արձանագրուի շատ չեղաւ այս անգամ, բաղադրամասն նախորդ շաբաթներուն, որովհետեւ կախակալուցան միայն չորս մարտիկներ: Առաջին հերթին Ալի Սայտաւի մարտիկներէն Մաարուֆ Նամանի երկու ամիսով կախակալուցաւ առանց գնդակի մրցակից կազմի մը մէկ մարտիկին վարկած ըլլալուն պատճառով: Անոր

իրապարակեց նաեւ Լիբանանի ֆութպոլի Ողիմպիականի խումբին մաս կազմող մարտիկներուն անունները, որոնք յառաջիկայ Շաբաթ, 19 Ապրիլին, Յորդանանի դէմ պտուծի մրցում մը ունին կատարելիք, Աթէնքի մէջ 2004ին տեղի ունենալիք Ողիմպիականի դարձին գծով: Նշենք, թէ երթին Լիբանան, որ իր դաշտին վրայ 0 - 0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց, դարձին Յորդանանի մէջ պտուծ է անպայման, որ յաղթանակ մը արձանագրէ:

Ստորեւ՝ Լիբանանի Ողիմպիականի խումբին մաս կազմող մարտիկները. Յակոբիկ Տօնայետեան, Ռոնի Ապար, Փօլ Ռքսթոմ, Ատիամ Ղատար, Սամի Շում, Մոհամէտ Սթիան, Հրէսի Թահիան, Հասան Մրչիէր, Խըրըր Նահիթ, Խալէտ Համիէ, Ալի Աթաթ,

ժորժ Սառէք, Ապաս Բընասան, Եհիա Հաշէմ, Ապաս Աթուէ, Մոհամէտ Շահրուր, Համպէ Մասրի, Խալիլ Չիապ, Իսա Ռամատան եւ Ամէտ Շում: Ֆետերասիոնը իրապարակեց նաեւ 18 տարեկանէն վար կրտսերներու ֆութպոլի ազգային խումբին մաս կազմող մարտիկներուն անունները, որոնք Փարիզի մէջ (Ֆրանսա) իրենց մասնակցութիւնը կը բերեն (Ապրիլ 14էն 22) ֆութպոլի միջազգային մրցաշարքի մը: Դժբախտաբար սակայն այդ կազմին մէջ չկայ ունեցող մարտիկ, նկատի ունենալով որ 19 մարտիկներն ալ տեղացիներ են:

Ֆետերասիոնը ոչ մէկ փոփոխութիւն կատարեց Բ. դասակարգի ախոյեանութեան 24րդ եւ վերջին հանգրուանին գծով, հետեւաբար անոնք տեղի պիտի ունենան նախապէս իրապարակուած յայտագիրին հիմամբ:

Ստորեւ՝ 24րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (բոլորն ալ տեղի պիտի ունենան ժամը 4:00ին):

ՎԵՐՋԻՆ, 17 ԱՊՐԻԼ	ԴԱՇՏ
Շապապ Թրիփոլի - ՌասիԳ	Թրիփոլի
ՌԻՐԲԱԹ, 18 ԱՊՐԻԼ	
Ռիատա Ուալ Ատապ - Իսլահ	Թրիփոլի
ՇԱՐԱԹ, 19 ԱՊՐԻԼ	
Իժթիմահի - Նահտա Պար Էլիաս	Թրիփոլի

ԿԻՐԱԿԻ, 20 ԱՊՐԻԼ	ԴԱՇՏ
Ը.Ս.Ս. - Ը.Ս.Ը.Ս. ՊԵՅՐՈՒՄ Մահապպա - Թատամոն Լապաթիէ Թրիփոլի	
Հըրրիէ Մաժտ. Այնճար - Անի Սայտա Խիարա	

ՍՏՈՐԵՒ՝ Ա. դասակարգի ախոյեանութեան 17րդ եւ 18րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

17ԴՂ ՀՆՆԳՐՈՒՄԸ	ԺԱՄ	ԴԱՇՏ
ԵՐԵՔՇԱՐԹԻ, 22 ԱՊՐԻԼ		
Սաժէս - Սաֆա	4:30ից	Պ. Համուտ
Անտ - Պըրժ	4:30ից	ՊԵՅՐՈՒՄ
Շ. Սահէլ - Օլիմփիք	4:30ից	Ս. Աւան

ՉՈՐԵՔՇԱՐԹԻ, 23 ԱՊՐԻԼ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Անսար - Մապարրա	4:30ից	ՊԵՅՐՈՒՄ
Սալամ - Թատ. Սուր	4:30ից	Թրիփոլի
Նըժմէ - Ախա Ալէյ	4:30ից	Ս. Աւան

18ԴՂ ՀՆՆԳՐՈՒՄԸ	ԺԱՄ	ԴԱՇՏ
ՇԱՐԱԹ, 26 ԱՊՐԻԼ		
Սաժէս - Անտ	4:30ից	ՊԵՅՐՈՒՄ
Անսար - Նըժմէ	8:30ից	Ս. Աւան

ԿԻՐԱԿԻ, 27 ԱՊՐԻԼ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Պըրժ - Շապապ Սահէլ	4:30ից	Ս. Աւան
Թատ. Սուր - Օլիմփիք	4:30ից	Սուր
Սաֆա - Սալամ	4:30ից	Սաֆա
Մապարրա - Ախա Ալէյ	4:30ից	ՊԵՅՐՈՒՄ

ՍԼԱՆԻՆԱ ԱՆՁՆԱՍՊԱՆ ԵՂԱԾԷ

Չեխիոյ ոստիկանութիւնը շաբաթակիցին յայտնեց, թէ Չեխիոյ արթիթիփի ֆետերասիոնի փոխ նախագահ Եան Սլանինս, որ իր տան Օսթրաւայի մէջ մեռած գտնուեցաւ, անձնասպանութիւն գործած է: 54 տարեկան Սլանինս, որ նախապէս սիրիւրը մը եղած է, 1980ականներուն երկար վաղջի մասնակցող Թաթիանա Քոստեպովայի մարտիչը եղած է: Անոնք ապա ամուսնացած են իրարու հետ:

ՎԻՐՅ ՎԵՐԸՆՏՐՈՒԵՑԱԻ ԵԻՐՈՊԱՅԻ ԱԹԼԵԹԻԶՄԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Անցեալ շաբաթավերջին Աթէնքի մէջ (Յունաստան) իր գումարած ժողովին Եւրոպայի արթիթիփի ֆետերասիոնը դարձեալ նախագահ ընտրեց Վիլիամ Կիլըք, որ 49 անգամ երկիրներու 45 ներկայացուցիչներուն կողմէ ստացաւ 42 քուէ: Հայաստանի արթիթիփի ֆետերասիոնի նախագահ Սարգիս Խաչատրեան, որ քուէարկեց ի նպաստ Վիլիամի, ըսաւ թէ ինք բաւական լաւ կապեր ունի անոր հետ:

ԹԵՆԻՍ. ՄՈՆՁԵ ՔԱՐԼՈՅԻ ՄՐՑԱՇԱՐՔ

ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ԱՆՑԱԻ Գ. ՀՆՆԳՐՈՒՄԸ

Մոնաքոյի մէջ (Ֆրանսա) տեղի ունեցող Մոնթէ Քարլոյի թենիսի մասօրրպի մրցաշարքին, Վոլիցերիա Մարի - Գայիանէ Միքայելեան իր երկրորդ յաղթանակը արձանագրելով, ապահովեց Գ. հանգրուանին իր տոմար, ուր կը ճակատի ամերիկացի ձեւիֆըր Քափրիաթի դէմ:

Տղոց մրցաշարքին Ա. հանգրուանի մրցումներուն, պարտութիւն կրողներուն շարքին էին պելճիքացի Չալիէ Մալիսէ, Ալիսաբէն Քալերի (Արժանթին), Նիքոլայ Տալիտենքօ (Ռուսիա), Տոմիսիք Հրապարի (Սլովաքիա) եւ ուրիշներ:

ՖԻՖԱ Ն ԿԱՆԱԿԱՅԵՑ ԱԶՐՊԵՅՃԱՆԸ

ՖԻՖԱՆ երէկ յայտարարեց, թէ Արպէյճանի ֆութպոլի ֆետերասիոնը կը կախակալուի եւ անոր կ'արգիլուի Եւրո-2004ի պտուծի մրցումներուն, ինչպէս նաեւ ֆութպոլի միջազգային բարեկամական մրցումներու իր մասնակցութիւնը բերել, որովհետեւ անիկա ցարդ չէ կրցած համաձայնութեան զայ երկրին Ա. դասակարգի ակումբներուն հետ:



Ռոպերթ Քարլոս

Արպէյճանի ֆութպոլի ախոյեանութեան մրցումները ներկայիս ստեղծուած են, որովհետեւ Ա. դասակարգին մաս կազմող ակումբները կը մերժեն իրենց մարտիկները տրամադրել ազգային խումբին:

Նկատի ունենալով որ Արպէյճանի կառավարութիւնը միջամտի կ'ըլլայ ֆութպոլի վերաբերեալ հարցերուն, ՖԻՖԱՆ այլընտրանք չունենալով կը կախակալէ Արպէյճանի ֆութպոլի ֆետերասիոնը:

Արպէյճանի կախակալուը կը նշանակէ, որ անիկա յառաջիկայ Յունիս 11ին իր դաշտին վրայ պիտի չկարենայ հիւրընկալել Սերպիան եւ Մոնթենեգրոն:

Կը խօսուի նաեւ Արպէյճանը դուրս ձգել նաեւ Եւրո-2004ի ֆութպոլի մրցաշարքէն, ինչ որ կրնայ մեծ հարուած մը հասցնել անոր խմբակին (Թ. խմբակ) պարագլուխի դիրքը գրաւող Կալէսի, նկատի ունենալով որ անիկա Արպէյճանի դէմ կատարած է երկու մրցում եւ անկէ խլած վէջ կէտ: Մրցաշարքէն անոր դուրս դրուիլը կը նշանակէ, որ անոր կատարած արդիւնքները չեղեալ կը համարուին: Արպէյճան, այժմ մէկ կէտով կը գրաւէ խմբակին վերջին դիրքը:

● ՌՈՒՄԻՆՅՈՅ ֆութպոլի ֆետերասիոնը, երէկ Ե. Է. Ֆ. Ա. էն պահանջեց, որպէսզի յառաջիկայ Ապրիլ 30ին Թիֆլիսի մէջ տեղի ունենալիք Վրաստան - Ռուսիա (Եւրո-2004ի պտուծի մրցաշարք) փոխադրէ չեղոք դաշտ, իրանտալի դէմ տեղի ունեցած մրցումին (Եւրո-2004), վրացի համակիրներուն անկարգապահութեան պատճառով:

Ռուսիոյ ֆութպոլի ֆետերասիոնի ընդհանուր քարտուղարը՝ Վլատիմիր Ռատիոնով Ե. Է. Ֆ. Ա. էն պահանջեց նաեւ, որ այդ անկարգութիւններուն պատճառով, ինչպէս նաեւ Վրաստան - Ռուսիա կիսատ մնացած մրցումին համար պատժէ Վրաստանը:

Անոր այդ կատարած յայտարարութենէն կարճ ատեն մը ետք, Ե. Է. Ֆ. Ա. նորոշ չափով մը գործադրեց այդ մէկը, երբ հինգ հազար Վոլիցերիական ֆրանք տուգանքի ենթարկեց Վրաստանի ֆութպոլի ֆետերասիոնը: Սակայն Վրաստան - Ռուսիա այդ մրցումը չեղոք դաշտ չ'փոխադրեց: Անիկա տեղի պիտի ունենայ Թիֆլիսի մէջ, սակայն՝ դռնփակ:

Տ. խմբակին մաս կազմող Ռուսիա (2րդ) ունի 6 կէտ, իսկ վերջին դիրքը գրաւող Վրաստան՝ 1 կէտ: ● ՖԻՖԱՆ երէկ մերժեց ընդունիլ Ռոպերթ Քարլոսի կողմէ իրեն ներկայացած դիմումը, իր ստացած պատիժը ջնջելու համար: Մարտի աւարտին Փորթուգալ - Պրապիլի ֆութպոլի միջազգային մրցումին, որուան իրաւարարին վրայ յարձակած ըլլալուն համար, Ռոպերթ Քարլոս ՖԻՖԱՆի կողմէ կախակալուցաւ եւ անոր արգիլուցաւ միջազգային որեւէ մրցաշարքի մասնակցութիւնը բերել: ● ՖԻՖԱՆ աւելցուց քուէով, որ անոր այդ ստացած պատիժը կը մնայ ի զօրու մինչեւ յառաջիկայ Մայիս 9, երբ ՖԻՖԱՆ պատժական յանձնախումբը գումարէ իր ժողովը: Այս մէկը կը նշանակէ, որ Ռոպերթ Քարլոս իր մասնակցութիւնը պիտի չկարենայ բերել յառաջիկայ Ապրիլ 30ին Կուստայաբարայի մէջ տեղի ունենալիք Մեքսիքա - Պրապիլի ֆութպոլի միջազգային բարեկամական մրցումին:

ԱՅՍՕՐ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԵՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԴԵԿԱԿԱՐՆԵՐԸ ԿԸ ԿՆՔԵՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՄԸ

Ապագայ, ընդարձակուած Եւրոպական Միութեան ղեկավարները այսօր Աթէնքի մէջ ժողով մը պիտի գումարեն, կնքելու համար պատմական համաձայնագիր մը՝ հարաւային եւ արեւելեան Եւրոպայէն 10 նոր անդամներ ողջունելով: Ժողովը պիտի կայացուի Յունաստանի մէջ ապահովութեան անսխալընթացօրէն խիստ միջոցառումներու ներքեւ:

Երկու հարիւր քսան պաշտօնատարներ, որոնց կարգին՝ բազմաթիւ նախագահներ եւ վարչապետներ, ինչպէս նաեւ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան ներկայ պիտի գտնուին հանդիսութեան:

Անդամակցութեան համաձայնագիրը պիտի կնքեն Կիպրոս, Չեխիա, Էսթոնիա, Հունգարիա, Լատվիա, Լիթվանիա, Մալթա, Լեհաստան, Սլովակիա եւ Սլովենիա:

Բացի Ե. Միութեան 25 ներկայ եւ ապագայ անդամներէն, Պուլկարիա, Ռումանիա եւ Թուրքիա, որոնք Ե. Միութեան պաշտօնական թեկնածու երկիրներն են (աւելի ուշ անդամակցելու համար անոր), նոյնպէս ներկայ պիտի գտնուին համագումարին:

ԹՈՒՐԵՒԱ ԿԸ ՅՈՒՍԱՅ, ՊՐԻՒԵՒԷԼ ԿԸ ՉՈՒՇԱՅՆԷ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ապտիլլա Կիլ երէկ դարձեալ խօսած է Անգարայի յոյսերուն մասին՝ յառաջիկայ տարի Ե. Միութեան անդամակցութեան բանակցութեանց սկսելու իմաստով: Ե. Միութեան արտաքին գործոց նախարարները հաւանութիւն տուած են Թուրքիոյ նիւթական օժանդակութիւն հայթայթելու հարցին:

Միութեան ընդարձակման հարցերու յանձնակատար Կոնսթըր Վերհեօկըն քաջալերած է Կիլը, որ բարեկարգումներու ընթացքը շարունակէ, սակայն դարձեալ վաղաճառուցած է, որ Կիպրոսի վիշտը հարցը կրնայ տակաւին Անգարայի վիճակը բարդացնել:

Վերհեօկընի հետ տեսակցութենէ մը ետք, Կիլ շեշտած է, թէ Թուրքիա վճռած է ժողովրդականացման ընթացքը:

Միւս կողմէ, Թուրքիա եւ հիւսիսային Կիպրոս երէկ «կողմնակալ» նկատած են ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին մէկ բանաձեւը, որ թուրք կիպրացիներուն կ'այսպէս Կիպրոսի հարցին լուծման նպատակով ՄԱԿի ճիգերուն ձախողութեան համար:

ԱՐՁՈՒ ԹԱԹԵՐՈՒ ՄԱՔՍԱՆԵՆ ԳՈՒԹԵԱՆ ՉԱԽՈՂ ՓՈՐՁ...

ՄՈՍԿՈՒԱ, 15 (ԱՖՓ).- Ռուս սահմանապահ զինուորներ ձախողութեան մատնեցին դէպի Չինաստան հիմալայեան 28 արջերու թաթեր մաքաննեցելու փորձը, հաղորդեց «Իթար-Թասս» լրատու գործակալութիւնը: Մաքատան պաշտօնականներ ստանծ թաթերը գտած են օրոպիւսի մը սնտուկին մէջ: Հիմալայեան արջերուն թաթերը իբրեւ քաղցրեւէնիք կը պատրաստուին չինական խոհանոցին մէջ:

ՊԱՂԵՍՏԻՆԵՒԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԵՐԿՈՒՍՏԵՔ ԿԸ ԽԼԵՆ ՉՈՇԵՐ ԵՒ ՎԻՐԱԿՈՐՆԵՐ



Իսրայէլեան բանակը կը շարունակէ ամէնէն բիրտ ոճով ձերբակալութիւնները կատարել արմատական պաղեստինցիներու դէմ

Պաղեստինեան շրջաններուն մէջ երէկուան բախումներուն հաշուեկշիռը երեք պաղեստինցի եւ երեք իսրայէլացի զոհեր են, ինչպէս նաեւ քանի մը վիրաւորներ: Նապլուսի մէջ բախումի մը սպաննուեցաւ պաղեստինեան ծայրախաւովի շարժումի մը պատասխանատուներէն մէկը՝ Մալուքի Ֆրէյխ: Իսրայէլեան եւ պաղեստինեան ազդիւրները հաստատեցին թէ Ֆրէյխ Համասի պատասխանատուներէն է: Մալուքի «Աքսայի նահատակներու փաղանգներ» յայտնեցին որ Ֆրէյխ իրենց հետեւորդներէն է: Նապլուսի միջադէպին սպաննուեցաւ նաեւ իսրայէլացի զինուորական մը եւ երկու զինուորներ վիրաւորուեցան:

Նապլուսի մէջ այլ միջադէպի մը ընթացքին վիրաւորուեցաւ պաղեստինցի քաղաքայիններ: Բանակը ձերբակալեց նաեւ Համասի քանի մը հետեւորդներ:

Կապա - Իսրայէլ անցքին վրայ, պաղեստինցի զինուոր սպաննեց իսրայէլացի երկու քաղաքայիններ: Անցքին հսկող իսրայէլեան ուժերը սպաննեցին զինուոր: Իսկ Ռաֆահի մէջ սպաննուեցաւ պաղեստինցի մը, երբ իսրայէլեան իրաւապահ ուժերը ձերբակալեցին իսրայէլացի մէկ թաղամասը:

Միւս կողմէ, ՄԱԿի մարդկային իրաւանց

ՎԵՐՁԻՆ ԺԱՄ

ԱՊՐԻԼ ԱՊՐԱՍ ԶԵՐԲԱԿԱԼՈՒՄՍ՝ ՊԱՂԵՍՏԻ ՄԵՋ
Պաղեստինցի մը, որ 1985ին առեւտրած էր «Արշիլ Լաուր» Իտալական նաւը, երէկ ձերբակալուած է Պաղեստին մէջ, դաշնակից ուժերուն կողմէ: Պաղեստինցիին անունը Ապու Ապպաս է:

Միւս կողմէ, ՄԱԿի մարդկային իրաւանց

յանձնաժողովը դատաւարուեց իսրայէլի պաղեստինցիներու հաւաքական սպանութիւններ եւ «մաքագործում» կատարած ըլլալուն համար: Յանձնաժողովին անդամ 53 երկիրներէն 33ը բանաձեւին ի նպաստ քուէարկեցին, ինչպէս երկիրներ, որոնց կարգին են Միացեալ Նահանգներ եւ Գերմանիա, մերժեցին բանաձեւը: Իսկ 15 ուրիշներ այլ ձեռնպահ մնացին: Բանաձեւը հաստատեց նաեւ թէ պաղեստինցիները իրաւունք ունին դէմ դնելու իսրայէլեան գրաման:

ՄԱՐՍԻ ԳԾՈՎ ՏԱՐՕՐԻՆԱԿ «ԳԱՂՏՆԱ ՊԱՀՈՒԹԻՒՆ»...

Խիստ ու յամառ «գաղտնապահութիւն» մը կը շարունակէ պատել մահացու թոքառապի՝ ՍԱՐՍԻ տարածումը Ասիոյ մէջ: Չինաստան երէկ արգիլեց միջազգային մասնագէտներու մուտքը զինուորական հիւանդանոցներ, որ ենթադրաբար մեծ է թիւը հիւանդութենէն վարակուողներուն: Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութիւնը ՀՈՒ յայտնեց, որ Չինաստանի իշխանութիւնները արգիլած են մասնագէտներուն զինուորական հիւանդանոցներ մուտքը: ՀՈՒ պատուիրակութիւն մը հանդիպում ունեցաւ երէկ չին պաշտօնատարներու հետ իմաստու համար, թէ Պէյճինկ ինչպէս կը պայքարի համաճարակին դէմ: Պէյճինկ քաած է, թէ 14 նոր պարագաներ արձանագրուած են՝ 1438ի բարձրացնելով ՍԱՐՍԻ վարակուողներուն թիւը: Հիւանդութիւնը Չինաստանի մէջ ցարդ խլած է 64 զոհ: Հոնկ Բոնկի կառավարութիւնը երէկ յայտնեց, որ ինը նոր զոհեր խլած է ՍԱՐՍԻ եւ թէ հիւանդութեամբ վարակուած 42 նոր պարագաներ արձանագրուած են:

ՀԱԿԱԱՍԵՐԻԿԵԱՆ ՑՈՅՅԵՐ՝ ՊԱՂԵՍՏԻ ԵՒ ԱՅԼ...

ներ՝ բարկացած ցոյցէն, առաջին անգամ ըլլալով փորձեցին արգիլել թղթակիցներուն ներկայութիւնը: Սպայ մը ըսաւ, որ բողոքի ցոյցերը միայն թղթակիցներու եւ անոնց նկարչական մեքենաներու դիմաց տեղի կ'ունենան: Ցուցարարները ապա ուղղուեցան մօտակայ հրապարակը, ուրկէ վար առնուած էր Սատուսի: Հիւսէյնի արձանը: Հրապարակին վրայ անոնք կը բռնակալուեցին: Ո՛հ, ո՛չ Միացեալ Նահանգներուն:

Բողոքի պատկերը աւելի զօրաւոր էր Հարաւային Նասիրիա քաղաքին մէջ, ուր կը զուճարուէր ընդդիմադիր ճակատի ժողովը: Մօտաւորապէս 20 հազար իրաքցիներ մասնակցեցան ցոյցին, որ բողոքի արտայայտութիւնն էր ամերիկեան հովանաւորութեամբ կազմա-


կերպուած ժողովին դէմ: Ցուցարարները կը բացազանչէին. «Այո՛ ապատութեան, այո՛ իսլամութեան, ո՛չ Ամերիկայի, ո՛չ Սատուսի»: Իրաքցի թղթակիցներու եւ անոնց նկարչական մեքենաներու դիմաց տեղի կ'ունենան: Ցուցարարները ապա ուղղուեցան մօտակայ հրապարակը, ուրկէ վար առնուած էր Սատուսի: Հիւսէյնի արձանը: Հրապարակին վրայ անոնք կը բռնակալուեցին: Ո՛հ, ո՛չ Միացեալ Նահանգներուն:

Նասիրիայի ժողովը պոլսոքի ենթարմասնակցեցան ցոյցին, որ բողոքի արտայայտութիւնն էր ամերիկեան հովանաւորութեամբ կազմա-

կազմակերպութեան ներկայութեան իրաքի մէջ: Ընդ շարժումը տարակարծիք է նաեւ Իրաքի յաջորդ ղեկավարի ընտրութեան հարցին: Նասիրիայի հանդիպումին ներկայ էին նաեւ ամերիկացի պատուիրակներ, որոնց շարքին՝ Չայնայի Նիլիլիպատէ, որոնք իրաքցի ընդդիմադիր շարժումներու ներկայացուցիչներու հետ պիտի քննարկեն Իրաքի ապագան: Միացեալ Նահանգներ եւ Բրիտանիա կը խոստանան շուտով յառաջացնել իրաքեան ներկայացուցչական կառավարութիւն մը:

Միւս կողմէ, հիւսիսի գլխաւոր քաղաքներէն Մուսուլի մէջ երէկ տեղի ունեցած բախումներ տաք զոհ եւ աւելի քան հարիւր վիրաւորներ խլեցին: Ականատեներ յայտնեցին, որ ամերիկեան ուժերը

ՈՂՋՈՒՆԵԼԻ ԱՆՆԱԽԵՐՆԹԱՅ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ՄԸ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԾԻՆԵՐՈՒ «ՔԱՐՏԵՍԱԳՐՈՒՄ»-Ը



Գիտնականներ յայտարարեցին, որ արտառած են մարդկային ծիներու «քարտէսագրում»ը:

Մարդկային ծիներու (ձենոմ) «քարտէսագրում» ծրագրի «Հիւսիսային Բրիտանիա» մասնակից վեց պետութիւններ՝ Բրիտանիա, Չինաստան, Ֆրանսա, Գերմանիա, Ճապոն եւ Միացեալ Նահանգներ, յայտարարեցին, որ ամբողջացուցած են մարդկային ծիներու ճշդորոշման աշխատանքը: Նշեալ իրագործումին շնորհիւ կենսաբժշկական գիտութիւններու անսխալընթաց զարգացում պիտի արձանագրուի այսուհետեւ, նշուեցաւ յայտարարութեան մէջ:

«Հիւսիսային Բրիտանիա»-ը միջազգային ջանքերով սկսած էր 1990ին. անոր ուսումնասիրական եւ փորձառական աշխատանքները կը համակարգուէին վերոնշեալ վեց պետութիւններուն կողմէ:

Գիտնականներ անցաւ Փետրուարին յայտարարած էին, թէ արտառած են մարդկային ծիներու 95 առ հարիւրիս քարտէսագրումը: Մարդկային ծիներու ամբողջ համակարգը կը բաղկանայ 30էն 40 հազար ծիներէ, որոնք կը պարունակեն իրենց քանակին տասնապատիկ փոփոխութիւններու ծածկագիրները:

Մարդկային ծիներու ամբողջական պատկերին տիրապետելը գիտնականներու պիտի արտօնէ մշակել հիւանդութիւններու կանխարգիլման աւելի ձեռնտու միջոցներ, պատրաստել նոր դեղեր՝ բուժելու նախապէս անբուժելի կարծրացում հիւանդութիւններ:

Իր ժամկետէն երկու տարի առաջ ամբողջացած այս ծրագիրը նաեւ գիտնականներու առիթ պիտի տայ բուժումը գտնել քաղցկեղի ցարդ ծանօթ բոլոր տեսակներուն:

Ի տես այս անսխալընթաց ու գերողջունելի գիտին, քաղաքական աշխարհը երէկ աշխարհի չորս ծագերուն ծափողջիններով հանդէս եկաւ, վեր առնելով գիտնականներուն այս անգնահատելի իրագործումը:

(ԱՖՓ)

ՀԱՅԱՍՏԱՆ ԲՈՆԱԳՐԱՒԱԾ Է...

Շարունակուած Ա. Էջէն
Համար՝ շեշտելով, որ Հայաստան կը պնդէ այդ առաջարկին վրայ, որ տակաւին մերժելի է Պաքուի Համար:
Հայտար Ալիեւի կարծիքով, ԵԱՀԿի Մինսքի խմբակը անորոշ կեցուածք կը դրսեւորէ: «Ռուսիա կը զօրակցի Հայաստանին, իսկ Ֆրանսա եւ Միացեալ Նահանգներ սկզբունքային դիրքորոշում չեն որդեգրեր: Մինսքի խմբակը բանի մը տարիէ ի վեր նոր առաջարկներ չէ ներկայացուցած», յայտնած է Ալիեւ, յոյս յայտնելով, որ Թերի Տէյվիս լրջօրէն կը զբաղի Հարցով:
Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեճակողովի յատուկ զեկուցողը Պաքուի մէջ Հանդիպում ունեցած է նաեւ Ազրպէյճանի Միլլի Մեճլիսի նախագահ Մուրթուզ Ալիեւի հետ: «Թուրքիա» լրատու գործակալութեան Համաձայն, Տէյվիս յայտնած է, թէ Եւրոպական խորհուրդը յատուկ նշանակութիւն կը տա Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման, եւ թէ իր շրջան այցելութիւնը անոր լաւագոյն վկայութիւնն է: Տէյվիսի Համոզումով, «Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծումը այլեւս կարելի չէ ձգձգել»:
Ազրպէյճանի մէջ Թերի Տէյվիս նաեւ այցելած է ազերի զաջակականներու բնակավայր մը:
Թերի Տէյվիս վաղը պիտի մեկնի Հայաստան, երկօրեայ այցելութեան մը Համար: Նախատեսուած են Հանդիպումներ Հայաստանի նախագահին, Ազգային ժողովի նախագահին, խորհրդարանի քաղաքական ուժերուն, պաշտպանութեան եւ արտաքին գործոց նախարարներուն հետ: Ան նաեւ տեսակցութիւն մը պիտի ունենայ Ազրպէյճանէն բռնազաղթի ենթարկուած Հայերու հետ: